















### ՉԱՐՈՒՀԻ ԲԱԲԱՅԵԱՆ ԵՒ ՎԱՐԴՈՒՀԻ...

Շարունակում՝ 4րդ էջէն

Սեր պիտի իրականացնէր: Զ. Բ.- Արդէն իսկ կը պատրաստեմ երկրորդ ամփոփ սկաւառակը, որ բարդացած պիտի ըլլայ հայկական երգերու մեկնարանութիւններէ: Աշխատանքները ծրագրուածին պէս ընթանալու պարագային, ամփոփ սկաւառակը լոյս կը տեսնէ մինչեւ տարեկերջը:

«Ա.Ջ.Ռ.Ա.Կ».- Ձեր մեկնարանութիւնները կ'ընկալուին հայ երիտասարդներուն կողմէ, որովհետեւ անոնք կը խօսին անոնց երկու առուձով, երիտասարդութեան արագ յիմքերուն ու անոնց հայկական ժառանգութեան: Սակայն ի՞նչ է օտար հանդիսատեսին հակադրեցողութիւնը:

Զ. Բ.- Եթէ դրական չտպաւորէին, չեմ կարծիր, որ անոնց մօտ յաջողութիւն կը գտնէինք եւ վարդուհին կը խլէր միջազգային մրցանակներ, որովհետեւ թէ՛ անոր կատարողական վարպետութիւնը եւ թէ՛ երգերուն հայկական ոճային գեղեցիկութիւնը կը տպաւորէ օտար հանդիսատեսը:

Կ'ուզեմ ըսել, որ մեր հայկական երաժշտութիւնը չի զիջեր օտար երաժշտութեան եւ կ'ուզենք ամբողջ աշխարհին ներկայացնել հայկական երգարուեստը:

### ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարահին մէջ օտար դրամանշնորհներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթաւորի իրաքեան տինար	32,30 - 32,40 լ.ն.
Քուէթեան տինար	4850,00 - 4860,00 լ.ն.
Ֆուժայէի տինար	5035,00 - 5060,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00 լ.ն.
Ա.Մ.Էմիրութեան տինար	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէուական ռիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կիւի	249,00 - 259,00 լ.ն.
Անգլիական սթերլին	2462,00 - 2472,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1150,00 - 1155,00 լ.ն.
Թրքական լիրա	104,25 - 104,75 լ.ն.
Կիպրական փաունտ	3000,00 - 3025,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,55 - 12,65 լ.ն.
Աւստրալական հապար ֆրանք	13,20 - 13,25 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1100,00 - 1105,00 լ.ն.
Աւստրալական տոլար	989,00 - 994,00 լ.ն.
Եւրո	1766,00 - 1776,00 լ.ն.

● ՈՍԿԻ	
Անգլիական մէկ ոսկի	141,500 - 146,500 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	127,000 - 132,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	117,500 - 122,500 լ.ն.
Մեքսիկական փէսոս	667,500 - 696,500 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,636,000 - 17,836,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	365,50 - 366,00 \$
Մէկ օնս արծաթ	4,51 - 4,53 \$
● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրո	1.1718 - 1.1723
Քանադական տոլար	1.3673 - 1.3683
Չուիցերիական ֆրանք	1.3108 - 1.3118
Ճափոնական եէն	118.89 - 118.99
Մէկ սթերլին	1.6329 - 1.6339
Մէկ դոլար	565 դրամ
● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ	
Գիցի Ա. ճշդում	Գիցի Բ. ճշդում
Ա. կարգ	4 7/8 4 7/8
Բ. կարգ	4 7/8 4 7/8

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՆԵՐ. 01-252852

### ԱՅՏԵԱՄԻՆ ԳՆԴԱԿ ՆԵՏՈՂԸ ...

Շարունակում՝ 4րդ էջէն

Խորհրդապաշտ մըն է: Իր հեթանոսներուն մէջ մերթ հեթանոս գուսան է եւ մերթ իրանցի կամ արաբ տերվիչ, որ հակառակ տառապած ըլլալուն տաղանդաւոր է եւ հրապարակ իջած է իբրեւ իր գիտութիւնը փոխանցող խորհրդաւոր անձ: Անոր հերոսները կը թուին սերտած ըլլալ մարդկային երեւակայութեան իրազեկը, եւ որովհետեւ նաեւ իր նիւթերը առնուած են մարդու առօրեային, իր հեթանոսները կը մնան այժմեական ու մարդկային՝ համամարդկային:

Եղուարդ Պոյաճեան կ'ըսէ: «Կը դժուարանք Ռ. Զարգարեանին քով դնել ուրիշ անուն մը հայ գրականութեան մէջէն, որ իրեն չափ ընդունակ եղած ըլլալ այսպէս ըսած անշարժութիւնը քալեցնելու, մերթ նոյնիսկ վազցնելու: Ինքն է արագութեան պատրանք ստեղծողը, ոչ թէ անարագ, այլ բոլորովին անշարժ բաներով»: Ան շարժանկարային illusion մը կը ստեղծէ մինչեւ վերջը. ուրեմն պատրանագէտ մըն է: Եւ հեթանոսութիւնը ամենամեծ պատրանագիտութիւնը չէ՞ արդէն»:

Իբրեւ արուեստագէտ, Զարգարեանի մէջ արեւելք կայ քան արեւմուտք: Իր հեթանոսութիւնը արեւելքեան է, այսինքն՝ հայկական, որ բարեխառնուած է իրանեարարականով, իսկ պատմուածքները արդէն ժողովուրդը ունին իբրեւ միջավայր ու ոճ:

**«Ա.Ջ.Ռ.Ա.Կ»-ի**  
**ՆԵՐՈՒԱԶՄԱՆԻ ԹԻԻԵՐԸ**  
«Ա.Ջ.Ռ.Ա.Կ»-ի հետ կապուելու համար հետաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

### ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5452

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- |   |   |
|---|---|
| 1. Ոտքի կանգնած - Յուցական ածական:                | 1. Վրան միւ ջարդելու տախտակ - ձոխան:          |
| 2. Կոստան Զարեանի երկերէն՝ «... Պսակը» - Յղկուած: | 2. Դղրդոց - Հոյ՛լ - Ստացական ածական:          |
| 3. Խոտովը - Կանացի կռիւական բան:                  | 3. Մնայուն, յարատեւ - Գեղմ:                   |
| 4. Բիւզանդ եղիայանի ծննդավայրը - Հնձան:           | 4. Խաղ - Ինքնապաշտպանութեան միջոց:            |
| 5. Կաթնտու - Ո՛ւր:                                | 5. Միաշարժ - Յորեն մաքրելու գործիք:           |
| 6. Մովսէս Յարութիւնեանի գրչանունը:                | 6. Ռեմոն, արբոն:                              |
| 7. Արամազդի դուստրերէն - Սկունը:                  | 7. Յուսակտուր, բարոյալքուած - Տառի մը անունը: |
| 8. Այթմու, հիմակուան:                             | 8. Նեղ տեղի մէջ բաւեն - Արական անուն:         |
| 9. Ափրիկեան մայրաքաղաքը - Ուրոյն:                 | 9. Հանգրուան, դաղար:                          |
| 10. Կիլիկեան ոստան - Ժխտել, ընդունել:             | 10. Թագաւոր - Մեծ մայր:                       |
| 11. Բերդ - Էական բա՛յն - Տարիք:                   | 11. Վահան Թէքեանի ծածկանուններէն - Լեցուն:    |


ԹԻԻ 5451  
ԽԱՉԲԱՌԻՆ  
ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ն	Ա	Թ	Ի	Մ	Ա	Ք	Ի	Մ	Ա
2	Պ	Բ	Տ	Ե	Ն	Ե	Ր	Ա	Ն	
3	Ա	Դ	Ա	Ա	Ս	Ա	Ք	Ն	Ա	
4	Ա	Դ	Ի	Լ	Գ	Տ	Պ	Ա	Ն	
5	Տ	Ա	Լ	Ի	Վ	Ա	Ն	Ի	Ի	
6	Կ	Ա	Տ	Ն	Ա	Պ	Գ	Ն	Ա	
7	Գ	Ա	Ն	Ա	Ս	Ե	Ր	Ա	Ն	
8	Ա	Լ	Մ	Ա	Ս	Ք	Ի	Մ	Ա	
9	Ա	Ա	Յ	Ն	Ա	Վ	Ա	Ն		
10	Ա	Յ	Ծ	Ե	Ա	Մ	Ն	Ի	Գ	
11	Ա	Ս	Գ	Ա	Ն	Ջ	Մ	Ղ		

## ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՆԻՍԱԿԱՆԳԷՄ / ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

### ՃԵՉԻ ԵՐԱԺԻՇՏ ՃԷՅ ՏԻ ՈՒՈԼԹԸՐՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՉ



Ամերիկեան ճէյի երգաշխարհին մէջ իր նոր շունչով ու ճէյի իւրաքանչեւ մեկնարանութեամբ ցնցումներ յառաջացող երիտասարդ երգիչ Ճէյ Տի Ուոլթըրը ներկայիս կը գտնուի Լիբանան: 2 - 17 եւ 9 - 14 Յունիսին ան էլոյթներ պիտի ունենայ «Պլու նոթ Քաֆէ» գիշերային սրահ-վայրին մէջ:

Ճէյի ձայնային երգեցողութեամբ, ինչպէս նաեւ տեղւոյն վրայ կատարուած ճէյային ստեղծագործութիւններով հանդէս եկող Ճէյ Տի Ուոլթըրը կը նկատուի «Պի-հոփ» երաժշտութիւնը շարժող արուեստագէտներէն մէկը: Ան հրապարակած է մէկէ աւելի ձայնապնակներ, որոնցմէ նշենք «Մայրնոյ ին տը սի հաւույ» եւ «Քլիթ տէյ»:

Ճէյ Տի Ուոլթըրը, որ մեծ համարում կը վայելէ Նիւ Եորքի երաժշտական շրջանակներուն մէջ: Լիբանանեան էլոյթներուն պիտի ընկերակցի լիբանանցի նուագողներ Ուալիտ Թաուիլ (թմբկահար), Տոր Պատլոբեան (արմատական) և Քարլոս Ապու Շապաքէ (պաս): Նշենք, որ «Պլու նոթ Քաֆէ»-ի մէջ Տի Ուոլթըրի էլոյթները կը սկսին գիշերուան ժամը 10:00ին:

**ՕՂԵՐԵՆՈՅԹ**

ՉՈՐԵՔԸԱԲԹԻ,  
4 ՅՈՒՆԻՍ 2003

ՊԷՅՐՈՒՅԹ  
ՄԱՍԱՐԱ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ  
ՑԵՐԵԿ՝ 27°C

ԳԻՇԵՐ՝ 19°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝  
68%

### ԱՅՍՕՐ

- Նուագահանդէս. ձոն Սքիթ (ջութակ) եւ ձիգրգ Կոնգալո (փայփ օրկ), ժամը 20:00ին, Պէյրուսի Ամերիկեան համալսարանի «Էստէպլի Հոլ» սրահին մէջ:

- Յուցահանդէս՝ «Թու գ'արիս».- Ֆրանսական Մշակութային կեդրոնին մէջ, մինչեւ 13 Յունիս:

- Կապոնական մշակութային շաբաթ՝ ժամը 18:00ին, Սէն Ժոզէֆ համալսարանի «Փիեռ Ապու Նաթեր» սրահին մէջ:

- Գորգերու ցուցահանդէս՝ «Թափի տիւ Քորպա», «Արստը» բանգարանին մէջ, մինչեւ 12 Յունիս:

- Ջետեղման արուեստի ցուցահանդէս՝ «Էքրան մեկանց», Միշէլ Թաուիլի յարպարումի արուեստի գործերը, «Էստէպլ Հոլ» Սէ.Տ.» ցուցասրահ, մինչեւ 7 Յունիս:

- Նկարչական ցուցահանդէս՝ Թոգ Հիւսէյնիի գործերը, «Ժաննի Ռուպէլ» ցուցասրահ, մինչեւ 11 Յունիս:

**ԱՉԳԱԿ** **50 ՏԱՐԻ ԿՐԻՆՔ**  
4 Յունիս 1953

### ՀԱՅԵՐԸ ԿԵՍԱՐԻՈՅ ՄԷՉ

Կեսարիայէն կը գրեն. Հոգեգալուստի Կիրակի օրը պատարագի մատուցումէն ետք, հոգեհանգստեան մատուցող պաշտօն կատարուեցաւ Հայկազուն աւագ քահանային կողմէ, գործով քաղաք գտնուող Օրթոքսոսի ազգայիններէ Պետրոս Եմիլիանեանի ողբացեալ ծնողներուն յիշատակին: Այս առիթով Պ. Եմիլիանեան իր համեստ քսակէն կոկիկ նուիրատուութիւն մը ըրաւ եկեղեցւոյն:

Նոյն օրը, հոգեհանգստեան ընդհանուր պաշտօն կատարուեցաւ նաեւ 4-5 հարիւր տարուան ընթացքին Կեսարիոյ մէջ առաջնորդական եւ փոխառնորդական պաշտօն վարող հանգուցեալ աւելի քան 41 եպիսկոպոսներու, վարդապետներու եւ բանահաններու, որոնց շարքին իր օգտակար ծառայութիւններով ծանօթ սերունդէն Ա. քահանայ Պետրոս Եմիլիանեանի հոգուցեալ Կարմիր Լորտիկեանի որդին, Քորեայի Ամերիկեան Գալիկեան ռազմիկներէն ծովային սպայ Վահան Լորտիկեան, որ այժմ Ամերիկեան Օստինովսկի Միութեան մէջ կը պաշտօնավարէ:

Վ. Լորտիկեան եկեղեցւոյ գանգալէն բաժանումները լուսանկարեց՝ դրկելու համար Ամերիկա, իր ծերունի հանգուցեալ մօրը, որ աւելի քան 50 տարիէ ի վեր անոր կաթոսը կը քաշէ եղբր:

**ԱՅՍՕՐ 4 ՅՈՒՆԻՍԻՆ**

■1891.- Մահ՝ մեծատաղանդ դերասանապետ Պետրոս Ադամեանի:

■1909.- Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան Պոլսոյ պատրիարք կ'ընտրուի:

■1918.- Կը ստորագրուի Պաթումի հաշտութեան դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ միջեւ: Թուրքիա այս ձեռով առաջին պետութիւնը կ'ըլլայ՝ Անկախ Հայաստանը պաշտօնապէս ճանչնող:

■1981.- Մահ ընկեր Խաչիկ Արապեանի:



ԹՈՒՐԵՒ

ԱՅԼԱԽՈՂ ԳՐԱԳԷՏԻ ՄԸ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԿՍԱԻ

ԱՆԳԱՐԱ, 3 (ԱՅՓ).- Թրքական պետական ապահովության ատենանի մը մէջ Երեքշաբթի օր սկսաւ այլախոլ գրագէտ Ֆիքրէթ Պասքայաի դատավարութիւնը, անոր գրած մէկ գիրքին հարցով, ուր ան քիրտերու հանդէպ Անգարայի քաղաքականութիւնը կը դատաւարտէ:

Գրագէտը արդէն 1993ին 20 ամիս բանտարկուած է գիրքին համար:

Մարդկային իրաւանց պաշտպաններ եւ նոյնիսկ խորհրդարանի անդամներ այս քայլը քննադատած են, ըսելով, թէ անիկա ցուցանիչ է, որ Թուրքիա ժողովրդավարականացման համար անհրաժեշտ բարեկարգումները չի գործադրեր, մինչ քան որ քրեագրած է Ե. Միութեան չափանիշներուն հասնելու համար:

Դատախաչութիւնը 4 տարուան արգելափակում պահանջած է Պասքայաի համար (63 տարեկան), իր գիրքին մէջ «անջատողականութեան քարոզչութիւնը» կատարած ըլլալու յանցանքով:

Այն յօդուածը, որուն հիմամբ Պասքայաի դէմ ամբաստանութիւն ուղղուած է, լայնածիր կերպով օգտագործուած է քրտական իրաւունքներուն ի նպաստ արտայայտուողներ բանտարկելու համար:

Անիկա պիտի ջնջուի՝ շարք մը նոր բարեկարգումներու ծիրէն ներս: Կատավարութիւնը կ'առաջադրէ վանոնք այս ամիս խորհրդարանին ներկայացնել:

Սրբապետրկի Մարդկային իրաւանց Եւրոպական Ատենանը 1993ի ամբաստանութենէն ետք դատաւարտած է վայն եւ Անգարայի հրահանգած, որ Պասքայաի հատուցում կատարէ:

ԻՐԱՔ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԴԷՍ ՆՈՐ ՅԱՐԶԱԿՈՒՍ ՄԸ

Ամերիկացի զինուոր մը սպաննուեցաւ երէկ Իրաքի մէջ, ուր զինեալներ յարձակում մը գործած էին անցարգելի մը վրայ: Ամերիկեան ուժերու հրամանատարութեան մէկ բանբերը յայտնեց, որ զինեալներ ձեռնառումներով յարձակում գործած են անցարգելի մը վրայ, Պալատ քաղաքին ճամբուն վրայ՝ Պաղտատէն դէպի հիւսիս- Թիբրիթի ուղղութեամբ: 1 Մայիսէն ի վեր, ամերիկացի 24 զինուորներ սպաննուած են Իրաքի մէջ:

Միւս կողմէ, հարիւրաւոր իրացքներ բողոքի ցոյց մը կազմակերպեցին Պաղտատի մէջ: Անոնք կը բողոքեն շիի կրօնաւորի մը ձերբակալութեան դէմ: Շէյխ Ժասէմ Սատի մէկ օր ձերբակալուած մնալէ ետք, ազատ արձակուեցաւ:

Հիւսիսային Քերքուք նահանգին մէջ բնակիչներ գտած են հաւաքական գերեզման մը, ուր ենթադրաբար թաղուած են 200 քիւրտ մանուկներ:

BALTAYAN ELECTRONIC advertisement featuring various electronic products like radios, cameras, and mobile phones.

RAFCO Water Technology advertisement featuring water filters, pumps, and swimming pool equipment.

ԵՎԻԱՆԻ ՎԵՐԱԺՈՂՈՎԸ ՓԱԿՈՒԵՑԱԻ ԱՇԽԱՐԿԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՒՄԻ ԸՆՈՒՆԿԱՐՆԵՐՈՎ



Աշխարհի ամէնէն աւելի ծարտարարուետականացած երկիրներու Ութերու խմբակին ղեկավարները երէկ ինքնավստահութեամբ արտայայտուեցան ընդհանրական տնտեսական վերականգնումին եւ աշխարհի տարածքին ահաբեկչութեան սպառնալիքին դէմ պայքարելու համար առնուելիք քայլերուն մասին:

Աշխարհի ամէնէն ուժեղ երկիրներուն ղեկավարները, որոնք Ֆրանսայի Էվիան քաղաքին մէջ վեհաժողով մը գումարած էին Սատտամ Հիւսէյնը տապալելու համար մղուած պատերազմին գծով իրենց խոր տարակարծութիւնները կամրջելու նպատակով, համախոհութեան մը յանգած են՝ ազատ, ժողովրդավար, կայուն Իրաքի մը պորալիզ կանգնելու գծով:

Էվիանի վեհաժողովին աւարտին, անոնք լայնածիր ծրագիր մը հրապարակած են՝ հաւաքական ընթացքով վէճերուն տարածումը կասեցնելու նպատակով, պոլազացնելով Իրանն ու Հիւսիսային Գորէան, թէ պէտք է ենթարկուին կորիզային մարտին մէջ միջապային օրէնքներուն: Անոնք նաեւ կոչ ուղղած են Փոնոկեանի, որ արգիլուած վէճերու որեւէ ծրագիրէ հրաժարի:

Վեհաժողովի մը, որ աւանդականօրէն կը յատկացուի ընդհանրական տնտեսութեան առողջութեան գնահատումին, ղեկավարները խոստացած են իրենց «միացեալ պատասխանատուութիւնը» կատարել՝ թափ տալու համար տնտեսական աճին: Սակայն անոնք իրենց վերջին հաղորդագրութեան մէջ չեն նշած անկում արձանագրող տոյարի եւ եւրոյի ու եէնի սրնթաց ուսումին հարցը:

DAY WATER advertisement featuring a water dispenser and a list of minerals. Text includes 'RECOMENDED FOR BABIES', 'Free Delivery', and '19 Litr. @ 2000L.'. Contact info: DAY WATER, Tel.: 03/435298.

FUEL CARD advertisement for IGOL. Text includes 'FUEL CARD գործածեցէք', 'Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուալու պարագային:', and '04 / 715111 - 222 - 333 թիւերուն:'. Lists various fuel stations like MANAR, MALLAH, BASSIL, etc.

ՐԱՏ ՍԻ. ԱՅ. ԷՅ.Ի

«ՔԱՅԻՏԱ» ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՎՏԱՆԳԱՒՈՐ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐՈՒ

Մի. Այ. Էյ. յայտնած է, թէ «Քայիտա» ցանցը կը պատրաստուի քիմիական, կենսաբանական եւ նոյնիսկ կորիզային յարձակումներու ձեռնարկելու:

Մի. Այ. Էյ.ի տեղեկագիրը նշած է, թէ ծայրայեղական քանի մը իմքակներ, որոնք կապեր ունին «Քայիտա»ի հետ, փորձած են Եւրոպայի մէջ յարձակումներու ձեռնարկել՝ «դիրաւ արտադրուած քիմիական նիւթերով եւ թոյներով, որոնք աւելի յարմար են սպանութիւններուն»:

Անիկա իտալացի նաեւ Աֆղանիստանի մէջ գտնուած մարդուներ ցոյց տուող վիտէօ-երկիւներու մասին, որոնք կը ցուցադրեն «Քայիտա»ի քիմիական նիւթերով կարգ մը փորձերը:

ԷՅ. ՊԻ. ԱՅ.Ի ՏՆՈՐԵՆԸ ՓԱՔԻՍԱՆԻ ՄԷՋ

Միւս կողմէ, ԷՖ. Պի. Այ.ի տնօրէնը՝ Ռուբըրթ Միլլըր երէկ միօրեայ այցելութիւն մը տուած է Փաքիստան, ուր պաշտօնատարներու հետ հասնիպուններ ունեցած է:

Փաքիստան Մ. Նահանգներու բանալի մէկ դաշնակիցը եղած է ահաբեկչութեան դէմ անոր ձեռնարկած արշաւին մէջ:

Փաքիստանեան գաղտնի սպասարկութիւնները յայտնած են, թէ կուսակցական (Քուպա) ամերիկեան բանտին մէջ արգելափակուած «Քայիտա»ի կասկածելիներուն մեծամասնութիւնը իրենք գտած է ձերբակալուած են: Անոնք 2001ի վերջերէն ի վեր, «Քայիտա»ի շուրջ 450 օտար անդամներ ձերբակալուած են ու անոնց 346ը Մ. Նահանգներու յանձնած, իսկ մնացեալ 36ը՝ այլ երկիրներու: (ԱՅՓ)

ԳԵՐՄԱՆԻԱ

ՔԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆՈՒԻ ԽԱՓԱՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՄԲ

ՊԵՐԼԻՆ, 3 (ԱՅՓ).- Գերմանիոյ իշխանութիւնները ՔԱԿԻ ղեկավարներէն կասկածելի մը ամբաստանած են պատանդ բռնած ըլլալու եւ ոճրային կազմակերպութեան մը անդամակցելու յանցանքներով, ըսած է դաշնակցային դատախաչութեան գրասենեակը, Երեքշաբթի օր:

Անիկա յայտնած է, որ կասկածելին, որ Այի Զ. անունով քիւրտ ծագումով թուրք մըն է, ՔԱԿԻ շրջանային ղեկավարներէն է եւ թէ ան ծրագրած է Գերմանիոյ իշխող Ընկերվար ժողովրդավար կուսակցութեան Համպուրկի շրջանային գրասենեակին վրայ 1999ի «յարձակումը»:

Անոր ղեկավարութեամբ, շուրջ 20 քիւրտեր մտած են շէնքէն ներս եւ կուսակցութեան գրասենեակներուն մէջ բանտարկած են իրենք պիւրէնը:

Երբ ոստիկանութիւնը անոնց հետ բանակցած է, որպէսզի հեռանան, ՔԱԿԻ անդամները սպառնացած են հրկիզել Ը. Ժ. կուսակցութեան շրջանային մէկ ղեկավարը, պոր պատանդ բռնած էին: Աւելի ուշ, անոնք շէնքէն դուրս բերուած են, իսկ պատանդը անվնաս ազատ ձգուած է:

Այի Զ. Դեկտեմբեր 2002էն ի վեր արգելափակուած է:

Գերմանիոյ մէջ ՔԱԿԻ գործունէութիւնը 1993էն ի վեր արգիլուած է՝ թրքական կեդրոններու վրայ շարք մը յարձակումներէ ետք: